Է. ՏԱՐԻ 1981 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 13 ՆԱԽԱՍԱՐԴ 4383 — Հ. Տ. 23 ՕԳՈՍՏՈՍ 1890 — Ն. Տ. 4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1890 — ՀԻՃՐ. 19 ՄՈՒՀԱՄՄԱԴԻՄ 1308 — ՀԻՆԳՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ Ո. ՏԻ ԻՐԵՂ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آرولك

غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԳԱԾԱՆՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար տարեկան գումարը	160
» » վեցամսեայ »	80
» » եռամսեայ »	40
Դուրսը » տարեկան »	200
» » վեցամսեայ »	100
Օտար երկիրների տարեկան գումար	56
» » վեցամսեայ »	28

Դուրս զրկուած լրագրաց համար ծախքը Տնօրէնութեան վրայ է
ամբագրութեանս զրկուած նամակ կամ գրութիւն ետ լրացուր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 23 ՕԳՈՍՏՈՍ, 1890

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱԼՔԱՆԵԱՆ ԴԻՊՔԵՐ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐ

Ուրիշ խնդիրներու հետ մէկտեղ, պալքանեան խնդիրք Եւրոպիոյ մեծագոյն զբաղումն են այս պահուս։ Անցեալ օր բաւական մանրամասնութեամբ բացատրեցինք Պուլկարիոյ, Ցունաստանի և Սերպիոյ միջև յառաջ եկած տարբեր տարբեր տպաւորութիւնները պուլկար եպիսկոպոսաց հաստատման առթիւ։ Եւրոպեան լրագիրք կը շարունակեն զանազան տեղեկութիւններ հրատարակել, որոցմէ կ'երևի թէ խնդիրը բաց կը մնայ։ Պուլկարաց եկեղեցին առանձին դրութեամբ մը խնդրեր է Ռուսիոյ Կայսրէն որ Պուլկարիոյ նկատմամբ հաշտարար ընթացքի մը հետևի։ Կ'երևի թէ Պուլկարիոյ վարչապետն ևս տրամադիր է իրաւախոհութեան մը գալու Ռուսիոյ հետ, ի պահպանութիւն խաղաղութեան։

Պուլկար եպիսկոպոսաց հաստատումէն ի վեր յարաբերութիւնք բարձրացած ու բազմացած են ընդ մէջ աւստրեան դիւանագիտական գործակատարաց և պուլկարական Եկեղեցի Եսէֆ արքեպիսկոպոսին։ Պուլկար տարբին իւր ազգային գոյութիւնը պահպանելու համար ուրիշ տարբերաց դէմ մղած պայքարին Աւստրիա նպաստամատոյց պիտի լինի եղեր, պայմանաւ որ Եկեղեցին ալ հակաւտրեան դեր մը չկատարէ։ Ցայս վայր Եկեղեցին ռուսական ազդեցութեան յարեալ կը համարուէր, և իրրև այն՝ խիստ հակառակորդ Պ. Սթամպուլովի, բայց այժմ քաղաքականութիւնը փոխուած կը թուի։ Պուլկար եպիսկոպոսաց խնդրոյն կարգադրումը մեծ մասամբ մաքրեց քաղաքական հորիզոնն, և Օսմ. Տէրութեան նկատմամբ նպաստաւոր տրամադրութիւններ յառաջ բերաւ ինչ ինչ կողմերէ։

—Պ. Սթամպուլովի թերթն, Սէզոյ, որոյ հրատարակութիւնը մասնաւոր կարևորութիւն ունի իբրև պուլկարական առաջնակարգ թերթին գրուածք, օգոստ. 29 թուով երկայն յօդուած մը կը նուիրէ Վիլհէլմ Կայսեր և Զարին տեսակցութեան։ Չի կարծեր թէ Պուլկարիոյ վրայ խօսուած լինի։ զի յայնժամ պէտք կը լինէր որ երկոքին Վեհապետք խօսէին ուրիշ խնդրոյ վրայ ևս, որք ստիպողաբար լուծում կը պահանջեն պուլկարական իշխանապետութեան աշխարհագրական դրից բերմամբ, ուր գրեթէ ամեն Տէրութիւնք մէկ մէկ կերպիւ շահակից են։ Սէզոյոս կը յիշէ ուրիշ լրագրաց կարծիքը թէ այս կայսերական տեսակցութիւն Պուլկարիոյ համար նըպաստաւոր ելք ունեցած է, իբր թէ Վիլհէլմ կայսր առաջարկեր է ճանաչել արդի կացութիւնն ի Պուլկարիա։ «Այլ ինչ որ լինի, մեր մասին դլխաւոր կէտն այն է թէ մեք Պուլկար ենք և Պուլկար կը մնանք։ Եւ մեք անզօր չենք ցորչափ մեր իշխան, մեր կառավարութիւն և մեր ժողովուրդ հայրենասիրաբար գործակցին իրարու, աշխատելով պաշտպանել պուլկարական շահերը։»

—Պուլկար կառավարութիւնը, Ռուսիոյ տրուելու համար գերման հիւպատոսին յանձնելով դատապարտեալ ռուսահպատակն Քալոպքով, յայտարարած էր թէ բացառաբար կը յանձնէ ի սեր Վիլհէլմ Կայսեր, և ո՛չ թէ Քափիթիլասիոններու հնազանդելով։ Այս յայտարարութեան ակնարկելով, Նոր Տէոյչ Ալկեմայնէ Զայտունգ գրեց թէ ուր որ Քափիթիլասիոնք կան՝ եղեռնագործութեամբ դատապարտեալ օտարազգիք պէտք է իրենց կառավարութեանց յանձնուին, և հետևապէս, Պուլկարաց ըրածը Քափիթիլասիոններու հետևողութեամբ է, և ո՛չ թէ ի սեր Վիլհէլմ Կայսեր։ Պերլինի կառավարական թերթին այս յայտարարութեան պուլկար կառավարութիւնը կը պատասխանէ իւր լրագրաց միջոցաւ թէ ինք կարող էր այդ ռուսահպատակը պուլկարական բանտի մը մէջ պահել իւր դաւաճանութիւնը քաւելու համար, և այսու բնաւ չեղած չպիտի լիներ օրինական շաւղէն։ Ի հաստատութիւն այս յայտարարութեան, պուլկար կառավարութիւնը կը յիշեցնէ թէ Ֆրանսացի մը այժմ ցկեանս բանտարկութեան պատիժ կը կրէ օսմ. բանտի մը մէջ, և ֆրանսական դեսպանութիւնը Քափիթիլասիոններու ոյժով ուրիշ բան չըներ բայց եթէ ամիսն անդամ մը պաշտօնեայ մը կը ղրկէ յայցելութիւն բանտարկելոյն։ Մեք ևս նոյնը կրնայինք ընել Քալոպքովի նկատմամբ, կ'ըսէ պուլկար կառավարութիւնը, բայց քանի որ գերման կառավարութիւնը միջնորդեց յանուն Վիլհէլմ Կայսեր, բացառաբար չուզեցինք իւր սիրոյն կոտրել։

—Սերպ կառավարութիւնը վերստին բանակցութեան մտեր է կայսրական կառավարութեան հետ՝ սահմանակից գաւառաց մէջ պատահող դէպքերուն միանդամ ընդ միշտ վերջ մը տալու համար։

ԲՐՈՒՍԻԱ ԵՒ ԼԵՀԱՍՏԱՆ

Գերման լրագիրք ժամանակէ մ'ի վեր կը զբաղին Բրուսիոյ լեհական գաւառաց վիճակին վրայ վիճաբանութեամբ։ Բրուսիոյ իշխանութիւնք քննութիւն բացին, և լրագիրք կը քննադատեն կառավարութեան վերջին ժամանակներս հետևած ընթացքը Փոզէնի մէջ (բրուսիական Լեհաստան)։ Պիզմարք Իշխանին Փոզէնի մէջ գերմանական գաղթականութիւն հաստատելու և այսպէս լեհ տարրին տեղ գերման տարրը զետեղելու ծրագիրն, որ ժամանակաւ այնքան եռանդեամբ ընդունուած էր, Լեհաց հայրենասիրութեան և ուրիշ արգելքներու առջև ի դերև ելած կը թուի։ Իրաւ է որ շատ մը Լեհեր գաղթեցին բրուսիական Լեհաստանէն, բայց անոնց թողած վայրերը փոխանակ գերման գաղթականաց մէջ բաժնուելու, սակաւաթիւ գերման շահատարց ձեռքն անցան, և հարկ եղաւ ռուսիացի գործաւորաց կոչում ընել երկիրը մշակելու համար։ Ի Փոզէն այսպէս վաղանցիկ տարր մը մուտ գտաւ, որ չփութացաւ յառաջ բերաւ։ Օտար գործաւորաց մուտքն արգիլել ուզուեցաւ ապա, և այն ժամանակ ալ աշխատութիւն պակսեցաւ, և մշակութիւն դադրեցաւ։ Ի Փոզէն հետեւապէս հանրագրեր կը ստորագրուին այժմ, խնդրելով բրուսիական իշխանութենէն որ ռուսական Լեհաստանէն գործաւորաց գալստեան թոյլ տրուի։

Քաղաքական տեսակէտով ևս Պիզմարք իշխանին հակաիհական քաղաքականութիւնն ակնկալուած պտուղը չտուաւ։ Լեհ երեսփոխանաց ստացած քուէներն որք 1884 ին 206,346 էին, 1890 ին բարձրացան 246,773 ի։ Գերմանական գաղթականութիւնը քաղաքներու նպատակաւ յատկացեալ սրճատուներն վանած միլիոնաւոր մարքերն արդիւնք չունեցան։ Լեհական գաւառք չգերմանացան, որովհետև Լեհք իրենք զիրենք ժողվելով վերստին ձեռք անցուցին գերման շահատարց թողած հողերը։ Գրեթէ ամեն կուսակցութիւնք միահամուռ կը պատրաստեն այս ձախող քաղաքականութիւն։ Մանաւանդ Ֆրայդենկէ Զայտունգ ազատական գլխաւոր թերթը պարագայէն օգուտ քաղելով ջախջախիչ յօդուած մը կը հրատարակէ Պիզմարքը իշխանին դէմ։ Երկար ժամանակէ ի վեր խիստ դրութեան մը ներքեւ ճնշուած բերանք եթէ անդամ մը ազատուին բացուին՝ ի՞նչեր դուրս չեն կրնար տալ։ Եւ այդ լրագրեր որք երկաթեայ ձեռքի մը տակ ճնշուած էին երբեմն՝ հիմակ օ՛րպիսի ազատութեամբ կը դրեն և կը քննադատեն։ Պ. Ռեխթերի թերթն իրողութեանց վրայ յենլով կ'ըսէ թէ ինքզինք ամենադէտ կարծող նախկին նախարարապետը սխալ քաղաքականութիւն մը բռնած էր Լեհերուն դէմ, ինչպէս սխալած էր Ընկերվարականաց դէմ և Կաթոլիկացնկատմամբ բռնած քաղաքականութեան մէջ։ Պիզմարք արտաքին աշխարհավարութեան մէջ միայն յաջողեցաւ։ Իւր ներքին աշխարհավարութիւն ձախողուածոց շարքը մ'ևս ևս երկարեցաւ։

ՀԱՅՔ Ի ԿԱՒԿԱՍԻԱ

Իթէլթա հրատարակեալ Ռէվէ-դ'Օ-ռիէն շաբաթաթերթն յօդուած մը կը հրատարակէ Կաւկասեան իրերու և ազգութիւններու վրայ, յորմէ քանի մը հատուածներ կը թարգմանենք ի ստորև։

«Ռուսաց Անդրկաւկասիա (Զաքաքէզէ) կոչած երկիրը կը պարունակէ զՎրաստան (Կրուզէ) և ռուսական Հայաստան, և Կաւկասոյց ասիական կողմն վրայ կը տարածի, Սեւ ծովու և Կասպից ծովու միջև գտնուող լեռնադաշտին վրայ։ Հետաքրքրաշարժ խնդիր մ'է թէ այս երկիր Եւրոպոյ թէ Ասիոյ կը պատկանի։ Գործնական կարևորութիւն ալ ունի այս հարց, քանի որ յԱսիա ղրկուած հեռագիրք աւելի սուղ են քան Եւրոպեան հեռագրեր։ Ռուսիոյ հեռագրական և թղթատարական վարչութիւնն Անդրկաւկասեան մասն կը համարի Եւրոպիոյ։ Բայց աշխարհագրական դասագրեանք տարբեր կարծիք կը յայտնեն, հաստատելով թէ Կաւկասիա սահմանակիտն է ընդ մէջ Ասիոյ և Եւրոպիոյ։ Կաւկասեան լերանց հարաւակողմն առ առաւելն Ասիոյ սեպն է, և այդ երկիր Եւրոպիոյ հետ ուրիշ վերաբերութիւն չունի բայց եթէ հատարակային քաղաքակրթութիւն մը և բազմաթիւ կէտերու վրայ կապակցեալ պատմութիւն մը։

«Այս երկրի վրայ պատմական յիշատակք յոյժ շահեկան են։ Սեւանայ վանքն համանուն լճին մէջ կը գտնուի։ Հմբաւաւորք է իբրև անկելանոց յանցապարտ հայ եկեղեցականաց։ Կղզին ցամաքի հետ ի հաղորդակցութեան է յոյժ նախնական նաւակներով, որոց թիավարք արեղաներն իրենք են։ Այդ վանքին մէջ կրնանք ուսումնասիրել վանական կեանքն իւր աւանդական հարազատութեան մէջ։ Մեր մարց սեռը ներկայացուցիչ չունի հոն։ Աբեղայք կը կատարեն առտնին աշխատութիւնները. կ'եփեն, կը լուան, կը կարկտեն։ Կը մշակեն իրենց արտերը։ Վանք մտնելու համար պէտք է մարդ մը անարատ մարմին ունենայ և անաղարտ կեանք։ Բահանայացուք պէտք է կաթողիկոսին մատուցանեն ստորագրութիւններն այն ազգայնոց որք իւր ժողովուրդը լինել կը յօժարին։ Հայ արեղային կեանքը վերջին ծայր պարզ է։ Իւր ոսկեղէն ապուրը գերադաս կը համարի Շանփանեի մեծ գինիներէն։ Բայց ո՛չ միայն իրենց նիւթական կեանքն, այլ և խմացական կեանքը վերջին ծայր պարզ է։... Դէորդ Սբովեան, առաջին հայ գրագէտն որ ժողովրդեան լեզուաւ ազգասիրական գիրք մը գրեց, ի Սիպէրիա վախճանեցաւ իբրեւ քաղաքական յանցաւոր։ Երեւան, ընդ մէջ Տըվրիսի և Պաքուի, կարեւոր կեդրոն մ'է վաճառականութեան Պարսկաստանի և Անդրկաւկասիոյ մէջեւ։ Ռուս Տարտարագէաք, իրենց յատուկ ճարպիկութեամբ, մէջեղ գտան Տփղիսէ ի Պաքու երկաթուղի մը շինելու, խուսափելով Երեւանէ։ Դիտմամբ ըրին որպէս զի յապագային ճիւղ մ'ալ չինելու պատեհութիւն ունենան։

«Բովանդակ Հայաստանի և մանաւանդ Երեւանի կուսակալութեան մէջ ըմբոստի ջրոյ նուազութեան պատճառաւ, Հայք հնարեցին այգեպանութիւն, զոր ընդարձակապէս ի գործ կը դնեն, և այգեպանք ոմանք իրենց ուսումն ըրած են Եւրոպեան մասնագիտական վարժարանաց մէջ, մանաւանդ ի Բլոմթերնեւպուրկ, Աւստրիա։ Երեւան երբեմն երկու լրագրեր ունէր, Պարէ և Աւուրվարդան, զորս ռուս կառավարութիւն յանկարծ խափանեց օր մը, և այժմ մերթ ընդ մերթ գիրքեր միայն կը հրատարակին յԵրեւան։

«Երեւանի բարեկեցիկ դասն ամառը կ'անցուցնէ ի Ծաղկաձոր (Թուրքերէն Տարչիչոտ), հայաբնակ երկրաց ամենէն վիպականն, որոյ վրայ սա գեղեցիկ վէպը կը պատմեն տեղացիք։

«Օր մը բազմաթիւ Հայուհիք, կանայք և կուսանք, պտոյտի ելան այս գեղեցիկ գաւառի մէջ։ Ցանկարծ զինեալ մարդոց խումբ մը յարձակեցաւ անոնց վրայ։ Հայուհիք փոխանակ աւազակաց անձատուր լինելու, նախանձեցան համարեցին մեռնիլ։ Քանի մը վայրկեան մէջ բոլոր դակ հովիտը ծածկուեցաւ արեամբ։ Երեկոյին այս Հայուհեաց մայրերն հոգ ընելով եկան փնտռել իրենց զաւակներ, եւ մեռած գտան զանոնք։ Ջերմ արտասուք լալ սկսան, և այնքան յորդառատ հոսեցին արտասուք որ խեղճ մայրերը մարեցան ինկան և քնացան նոյն հովտի մէջ։ Երբ արթնցան, լճացեալ արիւնն անհետացած էր։ Հողը, մանկամարդ զոհերուն արեամբ և մարց արտասուօք ոռոգեալ, մի քանի ժամու մէջ արտադրած էր հազարաւոր ծաղիկներ մին քան զմիւսն գեղեցկագոյն։ Մայրերն, այս աքանչելի երեւոյթով հմայեալ, մոռցան իրենց սուգ, և յօրէ անտի հովիտն այն յորջորջեցաւ Ծաղկաձոր, որոյ բառական թարգմանութիւնն է Տարաշիչաք։»

ՏԱՐԻՈՅՍ ՀՈՒՆՁԸ

Աշխարհի վրայ տարւոյս հնձոց քանակութեան նկատմամբ հրատարակուած պաշտօնական տեղեկութեանց նայելով, այն երկիրք որք դուրսէն ցորեն կը գնեն՝ այս տարի պէտք ունին 92-95 միլիոն մեթրական կենդինար ցորենի, (մէկ մեթրական կենդինար հաւասար է 100 քիլոկրամի)։ Ցորեն արտածող երկիրք կարող են իբր 105 միլիոն կենդինար հայթայթել։ Ռուսիա պիտի կրնայ 33 միլիոն արտածել, Միաց-նահանգք և Բանատ՝ 23 միլիոն, Հունգարիա 20 միլիոն, Ռումանիա ութ ու կէս միլիոն, Հնդկաստան եօթն միլիոն 600 հազար, Աւստրիա հինգ միլիոն, Պուլկարիա երեք միլիոն և Թուրքիա մէկ միլիոն 400 հազար կենդինար։ (Միայն Պուլկարիա բովանդակ Թուրքիոյ երկու անգամին աւելի ցորեն կ'արտածէ։)

Բայց որովհետև անցեալ տարւոյ հունձքէն քիչ բան մնացած է, և Ռուսիոյ մէջ երկաթուղւոյ հաղորդակցութիւնք կարգ մը կէտերու վրայ թերի են տակաւին, կը դուշակուի թէ խնդրանք շատ և մտուցումն անբաւական պիտի դայ, և հետեւապէս կը նախատեսուի ցորենի գնոյն բարձրացում մը։

Կը վախցուի նաեւ թէ արծաթի գնոյն բարձրացումը շատ վնասաբեր պիտի լինի ցորենի վաճառողաց ի Հունգարիա, Ռուսիա և Հնդկաստան։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԻՆԵՇԻՆՈՒԹԻՒՆ

Տասն տարիէ ի վեր է որ Ֆրանսայի հանրային առողջապահական խորհուրդն, որոյ կարծիքն հարցուցած էր կառավարութիւնն, հարկ դատեց զնդղել քանակութիւնն այն գաճին (ալկոլ) զոր Ֆրանսայի հարաւային գաւառաց այգեպանք սովորաբար կը գործածեն՝ իրենց գինիները փայլուն ցուցնելու համար։ Դատական պաշտօնեութեանց հրահանգ տրուած էր այս կանոնին հակառակ շարժող այգեգործներուն դէմ օրինաց տրամադրած պատիժներն ի գործ դնել։

Բայց յօրէ անտի չահակից այգեպաններու կողմէ հանրագրերով դիմում եղաւ դատական նախարարութեան որ իրենց խստապահանջութիւնը մեղմացնելու հրաման տրուի ընդհանուր դատախազներուն, և դատական նախարարն ալ գործն անուշ տեղը կապելու հրահանգ ղրկեց։ Հետևանքն այն եղաւ որ գաճի գործածումն անարգել յառաջ տարուեցաւ։ Ֆրանսական մաս մը գինիներու պատրաստութեան մէջ։ Եւ որ աւելին է, այս օրերս դատական նախարարը նոր շրջաբերական մը ղրկեց ընդհանուր դատախազներուն, որով կը պատուիրէ «չտատիսութեամբ չվարուիլ գաճ գործածող գինեգործներուն նկատմամբ։»

Թուն իրատամբ կը հարցնէ ի՞նչ կը նշանակէ այս նոր շրջաբերական։ Տարօրինակ չէ՞ միթէ տեսնել օրինաց գերագոյն նախարարը որ իւր իշխանութիւնը կը բանեցնէ ո՛չ թէ օրէնքը գործադրելու համար, այլ գործադրումը կասեցնելու համար։ Եւ յետոյ, նո՞ր տարօրինակ է միթէ տեսնել ֆրանսացի գինեգործներ որք անվանգ բարգրութեանց դէմ կը բողոքէին, օրէնքի համար՝ չամիսով գինեշինութեան դէմ, և իրենք թոյլատուութիւն կը պահանջեն իրօք վտանգաւոր բազդրութիւններ ընելու, քանի որ գինւոյ մէջ գաճի մուտ գտնելն հանրային առողջութեան բացարձակ վնասակար հռչակուած է միշտ։ Այս ֆրանսացի գինեգործք արհեստին անարատութեան նախանձախնդիր չեն երևիր, այլ միայն իրենց համար մենաշնորհ կ'ուզեն դարձնել գինիներու խարդախումն։ Եթէ այսպէս երթայ, կը յարէ Թուն, աշխարհ պիտի զզուի այն ֆրանսական գինիներէն զորս երբեմն անոնցմէ ախորժանօք կը դնէր։

Ի ՍԵՒ ԾՈՎ

Եւրոպական լրագիրք արդի կացութեան մէջ կարեւորութիւն մը տալով կը ծանուցանեն թէ ծովակալ Փէչուրով յանկարծ պաշտօնակ եղած է Սեւ ծովու ռուսական նաւատորմին հրամատարութիւնէն, և անոր տեղ ազգուագոյն հրամատար մը կարգուած է յանձին Բրէմէր ծովակալի։

ԴԷՊԵՐԸՆ Ի ՖՐԱՆՍԱ

Ճ'էվրէս նոր քաղաքային պատի մը հիմերը փորուած ժամանակ, Դ. և Դ. դարուց հռոմէական արոյրէ դրամք գտնուեցան 400 լիպրա ծանրութեամբ, որք պարկերու մէջ դրուած էին, պարկերն ալ փայտեայ սնտուկի մէջ։ Կ'ենթադրուի թէ ապահովութեան համար պահուած էին հոն, Փրանկաց ի Գալլիա արշաւած պահուն։

—Փարիզի և Պերլինի միջեւ ճամբորդութիւնը չորս ժամ եւս պիտի կարճի կառախմբի մը շնորհիւ որ Բոլոնի, Հիլտէսհայմի և Մակտէպուրկի ճամբով պիտի բանի։ Մինչ այսպէս գիտութիւնն եւս առաւել իրարու կը մօտեցնէ զՖրանսա և զԳերմանիա, կը մնայ տեսնել թէ քաղաքական և անտեսական ծթուած գաղափարք նորանոր ի՛նչպիսի պատուարներ պիտի քաշեն ընդ մէջ Ֆրանսայի և Գերմանիոյ։

—Ֆրանսայի և Միացեալ Նահանգաց միջեւ սաստիկ վիճաբանութիւն կայ, մի կողմէ Պ. Մաք Քինլիի մաքսակարգ։ Գիշերային վերջին կառախումբը կը մեկնի ժամ տասն-մէկը քսան-հինգ անցած։ և Բարիզէն ի Միւլուզ՝ ժամ տասն մէկը երեսուն հինգ անցած։»

Կոմսը հաչիւ ըրաւ թէ կոմսուհին որչափ ժամանակէ պէտք ունէր Բարիզի հինգ կայարանաց իւրաքանչիւրն երթալու համար, եւ սա եզրակացութեան յանգեցաւ թէ, բաց ի Բարիզէն Լիոն մեկնող վերջին կառախումբէն, կոմսուհին կրցած էր մեկնիլ գիշերուան միւս կառախումբերովը, ո՛ր կայարանէն ալ որ ըլլայ։ Սակայն Հավրը՞ թէ Թուլուզի, Ռէյմսի՞, Սդրազպուրկի՞ թէ Միւլուզի ճանրան բռնած էր։ Ահա անլուծանելի խնդիրը։ Որն որ ալ ըլլար, իրեն համար մեծ բան էր արդէն գիտնալ թէ իւր կինը Բարիզէն մեկնած էր այս ինչ կամ այն ինչ ժամուն, այս կամ այն կառախումբով։

Կոմսն իր յուշատետրին վրայ քանի մը ծանօթութիւններ գրեց որոց պէտք ունէր յաջորդ օրը կառարելիք խուզարկութեանցը համար։ Որոշած էր մէկ կամ մէկ քանի օգնականներ առնուլ։ բայց չէր ուզեր անգործ մնալ։ ընդհակառակն իր կողմէ ալ տեղեկութիւններ պիտի քաղէր։

ԺԲ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՍԵՐԲԻՆ ԵՒ ԸՆԿ.

Իրիկուան ժամ հինգին Լասէռլ կոմսին խուցին դուռը զարկին։

—Վերջապէ՞ս, ըսաւ կոմսը։

Եւ փութաց դուռը բանալ։

Մի՛քահասակ մարդ մը ներս մտաւ, որ

—Այդ տեղեկութիւններն ի՞նչ տեսակ ալ որ ըլլան, կը յարմարի՞ն ձեզ։

—Մենք մանաւոր ճիւղ մը չ'ունինք պարոն։ Զմեզ գործածող մարդուն կը պատկանինք և ձեռքերնուս եկածը կը-նենք իւր վստահութեան արժանանալու համար։ Մեր արհեստն է գիտնալ։ կը փնտռենք, խուզարկութիւններ կը կատարենք, որոցմէ ո՛չ մէկ բան կը վրիպի։ ամենէն ծածկեալ գաղտնեաց կը թափանցենք։ բացարձակ գաղտնապահութիւն մեր սկզբունքն է։ գործ մը լմնցունելէ ետքը, մեր բոլոր իմացածները մոռացման անդունդը կ'իյնան մեզ համար։ Սա ալ ըսեմ ձեզ, պարոն, որ մեզմէ պահանջուածէն անդին չենք անցներ։ Շատ անգամ կայր հնազանդութիւն մը ի գործ կ'ածենք։ Հիմայ, պարոն, կրնաք ըսել թէ ի՞նչ է ձեր խնդրածը։

—Նախընթաց իրիկուն, երիտասարդ մը՝ Սանզաքի դերակոմսը, որ Լոնտոն փոզոց թիւ 14 կը բնակի, Բարիզէն մեկնեցաւ յանկարծ, առանց մէկուն իմաց տալու։ Երկար ժամանակի մը համար մեկնեցաւ և հաւանաբար տեղ մը հաստատուելու մտօք։ Արդ, կուզեմ գիտնալ թէ ո՛ւր գացած է։

—Անտարակոյս կարգ մը գործարութեանց պիտի բաղխինք, բայց մեծ կարեւորութիւն չունին անոնք։

—Ըսել է կրնա՞մ վստահիլ Պ. Սէրբէնի վրայ։

—Բոլորովին, պարոն։ Արդէն ես ինքս յանձն պիտի առնում ձեր գիտնալ ուզածը իմանալ։

—Երկա՞ր ժամանակի պէտք ունիք։

—Անկարելի է ինձ, պարոն, պատասխանել ձեր հարցման, քանի որ ամեն բան կախում ունի ներկայանալիք պարագայներէն, ու դժուարութիւններէն զորս պէտք է կանխատեսել միշտ Մինակ, կը-նամ ապահովել զձեզ թէ վաղուընէ սկըսեալ գործի պիտի սկսիմ մեծ փութաջանութեամբ։ Կրնա՞ք յայտնել ինձ Պ. ու Սանզաքը ճանչող մէկ քանի անձանց անունները։

—Ո՛չ։ ես Պ. ու Սանզաքի ընկերական դիրքը չուսնենալուս, իր բարեկամներէն ոչ ոք կը ճանչնամ։

—Թերեւս պէտք չունենամ այդ կողմը փնտռելու։ Արդէն, Սանզաքի դերակոմսը իւր մեկնումը մարդու իմացուցած չըլլալով, ո՛չ ոք կրնայ գիտնալ թէ ո՛ւր գացած է։ Անշուշտ պատճառներ ունէր իր գնացած տեղը պահելու։

—Ատոր տարակոյս չիկայ։

—Երբ մարդ մը այսպէս յանկարծական կերպով աներեւոյթ կըլլայ, ըսել է թէ պահուըտելու պէտք ունի։ Կը հետեւի ուրեմն որ պարոն դերակոմսը զգուշական միջոցներ ձեռք առած է խոյս տալու համար հալածանքներէն որոց կրնայ մատնուիլ։ Ինչ մը առաջ ըսած դժուարութիւններս հոս կը կայանան ահա։ Սակայն անկողոք եղիր, պարոն, պիտի կրնանք յայտնել անոնց։ Ընդհանրապէս աւելի կնճռոտ գործերով կը պարապինք։

—Կը մնայ մեզ պայմաններուն վրայ խօսիլ, ըսաւ կոմսը։

—Ձիշդ է, պարոն, վասնզի ամեն աշխատութիւն վարձատրութեան մը արժանի է։

—Ի՞նչ կը պահանջէք տեսնենք։

—Մենք կանխաւ սակարկութեամբ գործ չենք տեսներ։ պատճառը պարզ է։ Երբ այս կամ այն գործին համար աշխատիլ սկսինք, չենք կրնար գիտնալ թէ որքա՞ն մարդ գործածելու պէտք ունինք, որքա՞ն ժամանակի մէջ կրնանք հասնիլ մեր նպատակին և թէ ի՞նչքան ծախք ընելու պիտի հարկադրուինք։

—Ձեմ ուզեր որ ինձի ի նպաստ բացառութիւն մը ընէք։ Ամեն մարդու պէս պայմանագրեցէք ինձ հետ ալ։

—Մեզ յանձնուած գործին քննութիւնը մեր պայմանաց իւր հիմ կը ծառայէ։ Անոր կարեւորութենէն եւ յարակից պարագայներէն կը դատենք կանխաւ թէ ինչ գժուարութեանց պիտի բաղխինք, և այն ատեն վեր ի վերոյ կ'որոշենք թէ քանի մարդ գործածելու ենք, իւրաքանչիւրին տալով հրահանգներ, մասնաւոր դեր մը եւ պաշտօն մը։ Նմանապէս կը-նանք որոշել, քանի մը օրուան տարբերութեամբ, թէ գործողութիւնը որքա՞ն ժամանակի կը կարօտի։ Իրաւ է թէ գործելու մեծ միջոցներ ունինք, բայց շատ անգամ կ'ստիպուինք ծայրայեղ խոհեմութեամբ շարժիլ, որով մեր փափաքածին չափ արագ կերպով չենք կրնար հասնիլ առաջադրեալ նպատակին։ Վերջապէս, պարոն, աւանիկ ի՞նչ կերպով կը համաձայնինք մեր յանախորդաց հետ։ Նախ, գործողութիւնը որքա՞ն ժամանակ որ տեւէ, աշխատութեան իւրաքանչիւր օրուան համար կանխաւ որոշեալ գումար մը կ'առնունք։

(Շարունակելի)

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՄԻԼ ՌԻԹՊՈՒՌ

ԽԵԼԱԳԱՐԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՆԿՈՒՄԸ

«Արևմուտք։— Նորմանտիոյ գիծ։— Բարիզէն Հավրը։ Գիշերային վերջին կառախումբը կը մեկնի կէս գիշերը տասը վայրկեան անցած։

«Օռլէանի գիծ։—Բարիզէն ի Թուռ և Պօրտօ կամ Բարիզ, Օրլէան և Թուլուզ, Վիէրզոնի ճանրով։ Գիշերային վերջին կառախումբը կը մեկնի կէս գիշերը քառասուն վայրկեան անցած։

«Բարիզ—Լիոն—Միջերկրականի գիծ։— Բարիզէն ի Լիոն և Մարսիլիա, Պուրիօնեի ճանրով։ Վերջին կառախումբը կը մեկնի գիշերուան ժամ տասն-մէկը տասը անցած։

«Հիւսիսային գիծ։—Բարիզէն ի Բէյմս կամ Բարիզէն ի Սուասօն։ Գիշերային վերջին կառախումբը կը մեկնի կէս գիշերը քսան-հինգ վայրկեան անցած։

«Արևելեան գիծ —Բարիզէն ի Սդրազպուրկ։ Գիշերային վերջին կառախումբը կը մեկնի ժամ տասն-մէկը քսան-հինգ անցած։ Բարիզէն ի Միւլուզ՝ ժամ տասն մէկը երեսուն հինգ անցած։»

Կոմսը հաչիւ ըրաւ թէ կոմսուհին որչափ ժամանակէ պէտք ունէր Բարիզի հինգ կայարանաց իւրաքանչիւրն երթալու համար, եւ սա եզրակացութեան յանգեցաւ թէ, բաց ի Բարիզէն Լիոն մեկնող վերջին կառախումբէն, կոմսուհին կրցած էր մեկնիլ գիշերուան միւս կառախումբերովը, ո՛ր կայարանէն ալ որ ըլլայ։ Սակայն Հավրը՞ թէ Թուլուզի, Ռէյմսի՞, Սդրազպուրկի՞ թէ Միւլուզի ճանրան բռնած էր։ Ահա անլուծանելի խնդիրը։ Որն որ ալ ըլլար, իրեն համար մեծ բան էր արդէն գիտնալ թէ իւր կինը Բարիզէն մեկնած էր այս ինչ կամ այն ինչ ժամուն, այս կամ այն կառախումբով։

Կոմսն իր յուշատետրին վրայ քանի մը ծանօթութիւններ գրեց որոց պէտք ունէր յաջորդ օրը կառարելիք խուզարկութեանցը համար։ Որոշած էր մէկ կամ մէկ քանի օգնականներ առնուլ։ բայց չէր ուզեր անգործ մնալ։ ընդհակառակն իր կողմէ ալ տեղեկութիւններ պիտի քաղէր։

ԺԲ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՍԵՐԲԻՆ ԵՒ ԸՆԿ.

Իրիկուան ժամ հինգին Լասէռլ կոմսին խուցին դուռը զարկին։

—Վերջապէ՞ս, ըսաւ կոմսը։

Եւ փութաց դուռը բանալ։

Մի՛քահասակ մարդ մը ներս մտաւ, որ

սային նոր օրէնքին պատճառաւ, որ ֆրանսական և ուրիշ օտար ապրանաց յԱմերիկա մուտքը կը խափանէ նորանոր արգելիչ տրամադրութեամբ, և միւս կողմէ ֆրանսական կառավարութեան այն հրամանագրոյն պատճառաւ, որով ամերիկեան խոզեղինաց ի Ֆրանսա մուտքը կը սեղմէ իբրեւ վատառողջ։ Ի դերեւ եկաւ այն յոյս թէ ամերիկացի ընդհանուր հիւպատոսաց ի Փարիզ դումարման արդիւնքը պիտի լինէր Մաք Քինլիի օրէնքին չեղարկում։

ԳԱՂԹԱՑԻՆ ՀԵՆԻՐԻ

Տքթ. Փեթերս, որ Ափրիկէի ներսերն ուղեւորած էր Էմին փաշան գտնելու, Պերլին վերադառնալով, ներկայացաւ արտաքին գործոց նախարար Պ. Ֆոն Մարշալի, և Զօր. Բաֆրիվիի եւս պիտի ներկայանայ։ Իրեն պաշտօն մը պիտի տրուի Պերլինի գաղթական պաշտօնատան մէջ, նմանապէս Վիսման հաղարապետին, որպէս եւս Յափրիկէ պիտի չվերադառնայ։ Բոլոր այս ափրիկեան երկրախոյզք վատառողջ կը վերադառնան։ Տքթ. Փեթերս եւս համամիտ չէ Անգլիոյ եղած զիջմանց յԱրեւելեան և ի Կեդրոնական Ափրիկէ, բայց կ'ըսէ թէ «Մեք երկիրներ կը գտանենք ո կը գրաւենք։ Կայսեր կը վերաբերի որոշել թէ պէ՞տք է պահել զանոնք թէ ոչ։

ԳԵՐՄԱՆԻՍ. ԵՒ ՌՈՒՍԻՍ

Ռուսիոյ երմական նախարար Պ. Վիշնիկրածքի հարցուցեր է Բաֆրիվի զօրավարին թէ ժամանակն եկած չէ՞ խափանելու տնտեսական ինչ ինչ տնօրինութիւններ զորս Պիզմարք իշխան ի գործ դրած էր՝ ռուսական եւերմաից դէմ մաքառելով։ Գերման նախարարապետը պատասխաներ է թէ այն տնօրինութիւնները չարունակելու այլ ևս պէտք չկայ, և յոյս յայտներ է թէ ի Պերլին վերադարձին կարող կը լինի Ռուսիոյ համար գոհացուցիչ կերպիւ կարգադրել խնդիրը դիւանագիտական ճամբով։

ՀԱՄԱՁԱՐԱԿՆԵՐ

Սպանիոյ մէջ հնտասաը չանհետացաւ, բայց անհիմն է այն լուր թէ վերջին օրերս սաստկացեր է։ 50-60 հոգիք կը բռնուին ամեն օր, և գրէթէ կէսը կը մեռնին, վարակեալ երեք չորս գաւառներուն մէջ։

Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ

Գուխարայի էմիրն, որ Կեդրոնական Ասիոյ սակաւաթիւ անկախ մնացեալ վեհապետաց մին է, որոշեց Ռուսիայէն խնդրել իւր բանակին համար մարզիչ և վարժիչ սպայներ և հրամայեց որ ռուսական ձեւով համազգեստներ շինուին պուխարացի զօրաց համար։

Պ. ՔՐԻՍՓԻ

Նախիլեի կը ծանուցուի թէ Պ. Քրիսփի օգոստ. 31ին Փրէնդէլ Օոդէն շոգենաւով մեկնած է, յորում ուրիշ ուղեւոր չկայ, և ո՛չ ոք գիտէ թէ ո՛ւր կ'երթայ շոգենաւը։ Պ. Քրիսփիի գէթ մի քանի օրուան համար անծանօթ և խորհրդաւոր ուղեւորութեան մը ձեռնարկելը շատ մեկնութիւն կը վերցնէ եղեր։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀՐԱՒԷՐ

ԱՌ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈԽԱՆ

Ազգային Ժողովոյ Դ. նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Ուրբաթ, 24 Օգոստոս, ի խորհրդարան Ղալաթիոյ։

Ատանը պիտի բացուի ժամ ճիշդ 3ին և փակուի 6ին։

Կը հրաւիրեմք Ազգային Երեսփոխանները որ հաճին առանց զանցառութեան ներկայ դտնուիլ։

Մնամ ազօթարար

Ի Դիմաց Ա.Ս.Ս. Պարբերական Հօր

Պարբերական Փոխանորդ

ՆԵՐՍԷՍ Վ. ԱՐՍԼԱՆԵԱՆ

22 Օգոստոս 1890

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Հրաժարական Ամեն. Ս. Պատրիարք Հօր. (Դոնդէ)

Բ. Ընտրութիւն Ա. Ատենապետի.

Ատենադպիր

Մ. Ե. ՄԷԼԻՔԵԱՆ

Կրօնական Ժողովը իւր շաբաթական նիստը կազմեց երէկ ի Պատրիարքարան, ատենապետութեամբ Դեր. Գարեգին եպիսկոպոսի Սրուանձտեանց.

Ժողովը տեղեկանալով որ Բէօսթէնճէի Զինեմիրեան Տ. Դաւթիել քահանան, որ մայրաքաղաքս եկած էր, առանց Կրօնական Ժողովոյ վերջնական որոշման սպասելու իւր պաշտօնատեղին դարձեր է, իւր մօր հիւանդութիւնը պատճառ բռնելով, հեռագրաւ ծանոյց Տ. Դաւթիել քահանային՝ թէ քահանայագործութենէ դադարեալ է և եթէ չուտով մայրաքաղաքս չգայ, իրեն նկատմամբ աւելի խիստ տնօրինութիւն մը պիտի ըլլայ։

Ժողովը, ըստ խնդրանաց Գարթալի թաղական խորհրդոյն, տեղւոյն եկեղեցւոյ առաջնորդ քարոզիչ կարգեց Պէնեան Արժ. Մամբրէ վարդապետը։

Սամաթիոյ Արժ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Մամբրէեանի որդին Պ. Գարեգին Մամբրէեան Ժողովոյ ներկայանալով պաշտօնագիր մը կը խնդրէր որպէս զի կարենայ շարունակել իւր դասախօսութեան պաշտօնն, յորմէ ժամանակէ մը ի վեր դադրած էր Կրօնական Ժողովոյ որոշմամբ։ Ժողովը նկատելով որ Պ. Գարեգին թէև յատենի ժողովոյ յայտարարած է թէ իւր հօր հետ հաշտուած է, սակայն միւս կողմէն ստուգուելով որ առանց իւր հօր հետ հաշտուած ըլլալու կուգէ շարունակել իւր պաշտօնը, վերստին ծանոյց Պ. Գարեգինի թէ առանց պաշտօնապէս հերքելու Փառք լրագրին մէջ իւր գրածներն և առանց իւր հօրմէն գիր մը ներկայելու, չը կրնար պաշտօն վարել։ Ժողովը միաձայն յանձնարարեց Պատրիարքական Դեր. Փոխանորդ Հօր, որ եթէ Պ. Գարեգին որ և է տեղ մը ուսուցչական պաշտօն վարէ, անմիջապէս արգիլուի։

Ահէօլու Պուրկազի քահանայն իւր ապրուստի անբաւականութեան պատճառաւ հրաժարական տուած էր։ Ժողովը որոշեց յանձնարարել տեղւոյն թաղական խորհուրդին, որպէս զի սիրաչահէ այդ քահանային ըստ բաւականի հոգալով նորա ապրուստը, միանդամայն յիշեցնել նոյն թաղական խորհրդոյ որ եթէ ուրիշ քահանայ մը երթայ, նա ևս պիտի հրաժարի ապրուստի անբաւականութեան պատճառաւ։

Ժողովը ասոնցմէ զատ զբաղեցաւ նաեւ այլ և այլ խնդիրներով։

Կրօնական Ժողովէն յետոյ Խառն Ժողովը ի նիստ գումարեցաւ ի Պատրիարքարան ատենապետութեամբ Ազն. Սահակ էֆէնտի Ղազարոսեանի և զբաղեցաւ գաւառական ու յարաբերական խնդիրներով։

Ժողովը ի միջի այլոց ընդունեց Բալուի առաջնորդ Արժ. Թէոդորոս վարդապետի հրաժարականն յառաջնորդութենէ վիճակին։

Նկատողութեան առաւ Բաղէշի անհովիւ վիճակն, որովհետեւ պատրիարքական փոխանորդ Արժ. Յովսէփ վարդապետ Սոլոմոնեան հրաժարելով, մեկնած էր անտի։ Ժողովը այս առթիւ խորհրդակցութիւններ կատարեց և որոշեց իւր յառաջիկայ նստին վերջնական տնօրինութիւն մը ընել։

Ժողովը տեղեկանալով որ Երէցեան Արժ. Դէորդ Ծ. վարդապետ, որ իբրեւ այցելու հովիւ Ռումանիա կը գտնուէր, Վիէննա գնացեր է առանց Պատրիարքարանի իմաց տալու, որոշեց այս մասին հեռագրաւ տեղեկութիւն ուղել Տ. Դէորդ վարդապետի եղբօրմէն, որ ի Ռումանիա։

Եղբայրութիւնք խնդրած էին որ Դեր. Դաւանդ եպիսկոպոս Շիշմանեան իրենց վիճակին առաջնորդ ընտրուի և Ամեն. Ս. Պատրիարք Հայրն ծանուցած էր թէ՝ Կիլիկիոյ Ամեն. Կաթողիկոսին և թէ՝ Եղբայրաց՝ որ Տ. Դաւանդ եպիսկոպոս արդէն ուրիշ վիճակի մը առաջնորդն է և ուրիշ առժամայ կարգ։ որ պաշտօն մ'ալ ստանձնած է, հետեւաբար պէտք է որ ուրիշ եկեղեցական մը իրենց առաջնորդ ընտրեն։

Տնտեսական Խորհուրդն երէկ իւր շաբաթական նիստը կազմեց ի Պատրիարքարան ատենապետութեամբ Մեծ. Միհրան էֆէնտի Սեթեանի և ի միջի այլոց զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով։

Նկատողութեան առնլով Խաղիւղի Նուպար-Շահնազարեան վարժարանի չէնքին խարխուլ վիճակն, որոշեց անուրդի դնելով վաճառել զայն։

Խորհուրդն յետ օրինական քննութեան՝ վաւերացուց Բերայի Թաղական խորհրդոյ մատակարարութեան բոլոր ճիւղերու հաշիւները։

Նոյնպէս վաւերացուց Էյուպի և Պոյաճը գիւղի եկեղեցեաց մատակարարութեան հաշիւները։

Թոփդարուի Թաղական խորհուրդն 90 ոսկւոյ փոխառութիւն մը կատարած և տեղեկագրած ըլլալով, խորհուրդը վաւերացուց այդ գործողութիւնն, որովհետեւ օրինական սահմանին մէջ կատարուած էր։

Խորհուրդն այս առթիւ նկատելով որ Թաղական խորհրդոյ Բարեկարգութեան Հրահանգին 27րդ յօդուածը պարտաւորութիւն դրած է Թաղական խորհրդոյ վրայ որ առանց Ցնտեսական խորհրդոյ դիտութեան և հաւանութեան ո'ր և է փոխառութիւն չկատարեն, որոշեց ծանուցանել որ այդ կարգի փոխառութեանց պարտամուրհակները վաւերական անպատճառ Ցնտեսական խորհրդոյ կողմէ, առանց որոյ պարտապահանքը իրաւունք չպիտի ունենան եկեղեցւոյ մնացորդներէն որ և է պահանջում ընելու։

Խորհուրդը նկատողութեան առաւ Կրէտէի Ս. Կարապետ եկեղեցւոյ եւ կալուածոց վերաբերեալ դրերն և առ այդ տեղեկութիւններ առաւ Տ. Մինասեան Արժ. Վահան վարդապետէն, որ, ինչպէս կը յիշուի, Ազգ. Վարչութեան կողմէ Կրէտէ ղրկուած էր այդ կալուածոց համար։ Խորհուրդն, յետ ընթերցման այդ կալուածագրոց, խորհրդակցութիւններ կատարեց նոյն կալուածները պահելու կամ վաճառելու խնդրոյն վրայ։

Էյուպի Ս. Եղիա եկեղեցւոյ թաղական խորհուրդը թաղին եկեղեցւոյն ու վարժարանին համար ինչ ինչ անհրաժեշտ նորոգութեանց պէտքն յայտնած էր և Ցնտեսական խորհրդոյ կողմէ քարտուղար Նշան էֆէնտի Փափազեան իբրեւ քննիչ հոն ղրկուած էր։ Խորհուրդն, ըստ տեղեկագրութեան իւր քննիչին, որոշեց արտօնել այդ նորոգութիւնները։

Մայր եկեղեցւոյ Թաղական Խորհուրդը՝ եկեղեցւոյ սեպհական և շրջափակին մէջ գտնուած դեռեւի մը վրայ վեց տուներ կառուցած և տեղեկագրած ըլլալով, Խորհուրդն որոշեց ներկայել այդ ծրագիրն Ազգ. Վարչութեան։

ՄԵԶՊՈՒՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

(Գիւղերաց Ա Ցերեկեաց)

ՍԿԻՒՏԱՐ

(Քսաներորդ վեցերորդ տարի)

Վարժարանիս նոր շրջանը կ'սկսի յառաջիկայ սեպտ. 3, երկուշաբթի օր։ Աշակերտուհեաց ընդունելութիւնք տեղի կունենան նոյն օրէն սկսեալ, իսկ դասախօսութիւնք կանոնաւոր կերպիւ կը սկսին ամսոյն 10ին երկուշաբթի։

Նոր աշակերտուհի տալ փափաքողք կը հրաւիրուին առաւօտներն ի վարժարան՝ ուր կը գտնուի

Հէնրիէթ Տնօրէն

161 Մ. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

(Գիւղերօրիէ Ա ցերեկեաց)

ՍԿԻՒՏԱՐ

(Հնգետասաներորդ տարի)

—

Վարժարանս իւր ԺԵ տարեշրջանը կը թեւակոխէ յառաջիկայ սեպտեմբերի սկիզբն։

Աշակերտաց վերամուտը և նորոց ընդունելութիւնը կ'սկսին սեպտեմբեր 3, երկուշաբթի օրէն։

Դասուց սկզբնաւորութիւնը տեղի պիտի ունենայ սեպտ. 10, երկուշաբթի առաւօտ։

Հէնրիէթ Տնօրէն

1—5 162 Ռ. Ե. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՆՇԱՆՆԵՐ

Իւլայի երկրորդ աստիճան տրուեցաւ Պետական խորհրդոյ անդամ Նաւրէտտին պէյի, Բ. Դրան թարգմանութեանց սենեկի քարտուղարներէն Ալի Նիհատ պէյի և Պոլսոյ վերաքննիչ ատենին ընդհանուր դատախազի օգնական Իսմայիլ Հագգը պէյի։

Սանիյէ Միւթէմիզի աստիճան՝ Բ. Դրան թարգմանութեանց սենեկի քարտուղարներէն Ահմէտ Նազըմ պէյի, Նիշի օսմանեան հիւպատոս Հանրի պէյի, ընդհանուր տպարանաց քննիչ Վարդերտի էֆէնտի, Ոստիկանութեան Նախարարութեան թղթակցութեանց դիւանին առաջին քարտուղար Սալիհ Սաիպ էֆէնտի, Բերայի ոստիկանաց ժողովին նախագահ Հիւսնի էֆէնտի, Սպարապետի Դրան սպայակոյտի ճիւղին քարտուղարներէն Նաճի էֆէնտի և Պետական խորհրդոյ օգնական անդամ Ահմէտ Ֆուատ պէյի։

Սանիյէի երկրորդ աստիճան՝ Բ. Դրան թարգմանութեանց սենեկի քարտուղարներէն Զէքի էֆէնտի, Ռաֆէնքի օսմանեան դեսպանատան երրորդ քարտուղար Նապի պէյի, ոստիկանութեան նախարարութեան թղթակցութեանց դիւանին դեր-տնօրէն Մուհարրէմ էֆէնտի, Նոյն նախարարութեան դիւանապետի օգնական Թեվֆիզ էֆէնտի, քարտուղար Մէհմէտ Ֆուատ ու առաջին արձանագրիչ Մուսթաֆա Մուխթար պէյերու և նախորդ Խալիլ Իսմայիլ փաշայի ապարանքին տնօրէն Հաֆըզ Մէհմէտ էֆէնտի։

Սալիսէի աստիճան՝ Պաղտատի կաթոլիկ երեւելիներէն Նաում Սարգիս էֆէնտիի եւ Սէլանիկի կաթոլիկ պուլկարաց առաջնորդարանին թուրքերէնի քարտուղար Բաճէ էֆէնտիի։

—

Առաջին կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ Թնդանօթարանի զինուորական մասուն ատենին նախագահ Ֆէրիդ Սալիհ փաշայի։

Երկրորդ կարգի Օսմանիէ՝ կարեւորագոյն իշխան Բարէր. Բէյսանի էֆէնտի Լալա Եուսուֆ պէյի։

Երկրորդ կարգի Մէճիտիէ՝ կարեւորագոյն իշխան Բարէր. Բէյսանտինն էֆէնտիի գործակատարներէն Հասան էֆէնտիի, Դատական նախարարութեան Հուգուգի գործոց տնօրէն Սամի էֆէնտիի, Պետական խորհրդոյ անդամ Զիւհտի պէյի, օսմանեան զրահաւորներու առողջապահական քննիչ Միրլիվա Իսաք փաշայի, Տիարպէքիրի Կիլանիներու առաջնորդ Տ. Ապտիւլի, Մուսուլի Կիլանիներու Պատրիարքական փոխանորդ Տ. Միխայիլ, արքեպիսկոպոս Տ. Իլիայի և Բէյքօզի Կիլանիներու առաջնորդ Տ. Ճիպրայիլ։

Երկրորդ կարգի Օսմանիէ՝ Եանեայի պահեստի զօրաց հրամանատար Միրլիվա Իսմայիլ Հագգը փաշայի։

Երրորդ կարգի Օսմանիէ՝ մաքսային ժողովոյ անդամ Մէհմէտ Ալի պէյի եւ Նիկոմիդիոյ պահեստի զօրաց Միրլիվա Սատաէտտին փաշայի։

Երրորդ կարգի Մէճիտիէ՝ Բ. Դրան թարգմանութեանց սենեկին առաջին ընդօրինակիչ Շէֆիգը էֆէնտի, Ծովային խորհրդոյ օրինական ճիւղին անդամ դնդապետ Հաճի Մուսթաֆա պէյի, Ծովային զինուորաց վարչին բժիշկ դեր-դնդապետ Սիւլէյման պէյի, մայրաքաղաքիս սպանիական դեսպանատան առաջին քարտուղար Պ. Թոմաս Պիթիրոյի, Ճէզիրէի Կիլանիներու առաջնորդ Տ. Եազուպի, Ամասիէի Կիլանիներու առաջնորդ Տ. Կէօրկիսի, Եպարքոսական թղթակցութեանց դիւանի քարտուղարներէն Ճէվատ պէյի և հրէից Խախամարանին կրօնական ժողովոյ նախագահ Շոլոմ Ֆրէսքօ էֆէնտիի։

Չորրորդ կարգի Օսմանիէ՝ Դաղըմ փաշայի ոստիկանապետ Շէմսի էֆէնտիի, Բերայի ոստիկաններէն Հիւսէյին էֆէնտիի և Սէլանիկի առեւտրական դատարանին անդամ Ռաֆքի էֆէնտիի։

Չորրորդ կարգի Մէճիտիէ՝ Պաղտատի կառավարական փաստաբան ու դատնմանց յանձնաժողովոյ նախագահ Ապտիւլճէպպար էֆէնտիի, Պոլսոյ նախնական դատարանին անդամ Ֆէյզի էֆէնտիի, Պէյճիոյ Լիւժ քաղաքի երեւելիներէն Պ. Տոֆէն Քալիմանի, յԱմասիայի հրատարակեալ ՆէրէՔ լրագրոյ խմբագրապետ Պ. Վէրմէօյի, Հայ-Հռոմէականաց Պատրիարքարանի թուրքերէնի քարտուղար Շէհրեան Յովսէփ էֆէնտիի, հրէից Խախամարանին առաջին քարտուղար Խարքիլ Խաիմ էֆէնտիի, հրեալերէն Թէվքէֆ լրագրոյ խմբագրապետ Իլաք Կապպայ էֆէնտիի և Բ. Դրան թարգմանութեանց սենեկի քարտուղարներէն Ֆուատ ու Սաֆվէթ պէյերու։

—

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՆԵՐՈՒՄ

Վեհ. Սուլթանը բարեհաճած է ներում շնորհել Հանեայի զինուորական ատենին կողմէ դատապարտեալ Կրէտացւոց, որոց դլխաւորներն են։

Տիմիդրաքի Բարտարաքի (դլխատման դատապարտուած), ոստիկան-զորաց ենթասպայ Վասիլ (մահուան), Մանոլի Օրֆանատաքի (հնդամեայ բերդարգելութեան յԱտանա) Միխայիլ և Եօրկի Քարքուսիմիքաքի (18ամեայ բանտարկութեան) Վասիլի ճիպլաքի (նոյն պատժոյ)։

—

ՕՍՄԱՆ ՊԷՅԻ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Օսման պէյի յուղարկաւորութիւնը մեծ հանդիսիւ կատարուեցաւ երէկ։ Մարմինը Նշան Թաշի ապարանքէն հանուելով Տոլմա Պաղչէ տարուեցաւ ուսկից շոգեմակոյկով ի Սիրքէճի։ Անտի մի և նոյն հանդիսիւ Ա.յա-Սոֆիայի մզկիթը տարուեցաւ, ուր կրօնական արարողութիւնք կատարուելէ յետոյ, Սուլթան Մահմուտի դամբարանին բակին մէջ ամփոփուեցաւ։

Յուղարկաւորութեան առջևէն կ'երթային Շազլը ու Եահեա էֆէնտի թէքքէներու Տերվիշներն ու կրօնական պաշտօնեայք, ոստիկան-զինուորք, Բ. Դրան բարապանք, թաղապետական պաշտօնեայք և այլք։

Յուղարկաւորութեան ներկայ գտնուեցան կայս. պալատն առաջին քարտուղար ու վախճանելոյն փեսայ Սիւրէյա փաշա, կայս. աւագ թիկնապահ Տէրվիշ փաշա և այլ բարձրաստիճան պաշտօնատարք։

Վեհ. Սուլթանին հրամանաւ՝ յուղարկաւորութեան ծախքը վճարուեցաւ կայս. մասնաւոր Արկղէն։

Թաղման հանդէսէն յետոյ դրամ բաշխեցաւ բազմաթիւ աղքատաց։

—

ՄԻՍԱՔ ԷՖԷՆԴԻ

Փարիզու օսմանեան դեսպանատան խորհրդական Միսաք էֆէնտի՝ Արտաքին գործոց նախարարութենէն ստացած մէկ հրաւէրին վրայ, երէկ իրիկուն մայրաքաղաքս ժամանեց արեւելեան ճեպընթաց կառախումբով։

—

ՅՈՇՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Դատական և կրօնական գործոց նախարարութիւնը յանձնարարած է Երուսաղէմի Յունաց Պատրիարքութեան Կ. Պոլսոյ փոխանորդին՝ ծանուցանել իւր վանուց միաբանութեան յԵրուսաղէմ, որպէս զի պատրիարքական տեղապահի ընտրութիւն կատարուի փութով։

—

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ձիրուէ և Եոմրա.—Ձիրատէի առողջապահական քննիչին կողմէ երէկ հասած հեռագիր մը ծանուցած է թէ օգոստոս 20ին Ձիրատէի մէջ հնտախտ որ և է դէպք պատահած չէ։ Եամպոլի մէջ օգոստ. 18ին՝ 6 և 19ին՝ 3 մահեր պատահած են հնտախտէ։

Բոմբայ. — Մաքքանոցի քննիչին կողմէ եկած հեռագիր մը ծանուցած է թէ Բոմբայի մէջ առողջապահական վիճակը գոհացուցիչ է։ Անգլիական Տէյլի Նիւզ շոգենաւով Հնդկաստանէ եկած ուխտաւորք, որք այս տարի Մեքքէ չէին կրցած երթալ իրենց մէջ պատահած հնտախտի դէպքերուն պատճառաւ, նոյն շոգենաւով Պոմբայ ուղեւորեր են։

Աւիկան Եանանէ։—Լրագիրք ոմանք ծանուցած էին թէ Մուսուլի Քէրքուք անուն տեղը հնտախտի նման հիւանդութիւն մը երեւան եկած ըլլալով, մահեր եւս պատահեր են, սակայն Մուսուլի կուսակալութենէն եկած հեռագիր մը ծանուցած է թէ այդ հիւանդութիւն հնտախտի հետ որ և է նմանութիւն չունի, այլ սառամոքսի բորբոքում է և թէ այս հիւանդութիւն յառաջ եկած է տրհաստու փտած պտուղներ ուտուելէ։

Տիարպէքիրի կուսակալութենէն եկած հեռագիր մը ևս ծանուցած է թէ օգոստոս 20ին Մարտինի ու ձէլիրեի մէջ հնտախտի որ և է դէպք պատահած չէ։

—

ՕՍՄ. ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ ՊԱՐՏՈՒՑ ՓՈՓՈԽՄԱՆ

Օգոստ. 29 թուով բարիզեան սեղանաւորական լրագիրը կը ծանուցանեն թէ Օսմ. պարտուց փոխոխման համար այս տարի ի հրապարակ հանուած 4 առ 100 տոկոսաբեր առանձնաշնորհեալ արժէթուղթք նոյն օրուընէ (անցեալ ուրբաթ) սկսեալ ընդունուած են Սակարանի գործողութեանց մէջ, թէ՝ կանխիկ և թէ՝ պայմանաժամով։ Յիշեալ լրագիրք այս առթիւ վերստին կը ծանուցանեն նորին փոխառութեան պայմաններն որք արդէն ծանօթ են մեր ընթերցողաց։

—

ՆՈՐ ԾԲԱԳՐԱՄ ՄԸ

Վեհ. Սուլթանին հրամանաւ հազար հինգ հարիւր շքադրամներ պիտի պատրաստուին տրուելու համար այն զինուորաց որք Կրէտէի վերջին դէպքերուն մէջ նշանաւոր հանդիսացած են իրենց քաջութեամբ։ Շքադրամը քառորդ մէճիտիէի մեծութիւն պիտի ունենայ և մէկ կողմը պիտի դրոշուի կայս. Թուղրան՝ շրջապատեալ դափնիի տերեւներէ, իսկ միւս կողմը այդ դէպքին թուականն և արձանագրութիւն մը թէ այդ շքադրամ յատկացուած է սենց որք Կրէտէի մէջ նշանաւոր հանդիսացած են իրենց քաջութեամբ։

—

ՎԱՐԺԱՐԱՆՔ Ի ԳԱԼԱՏԱ

Լաթաքիոյ Մէրքազ գաւառակին մէջ բնակեալ 40,000ի չափ Նօսէյրի ազանդաւորք ինչպէս նաև նոյն գաւառի շրջակայ Նասրիյէ գիւղերուն մէջ բնակող 15000ի չափ նոյն տեսակ ազանդաւորք Իսլամական կրօնքն ընդունած ըլլալով, Վեհ. Սուլթանը հրամայած է որ թէ՝ առաջնոց և թէ վերջիններուն համար 40 վարժարան ու 40 մզկիթ կառուցուի և մզկիթներու շինութեան ծախքն կայս. անձնական Գանձէն վճարուի։ Նոյնպէս Լաթաքիոյ գաւառին տրոց կրթական ճիւղին յատուկ մասն առժամայ կերպիւ բոլորովին այդ վարժարանաց յատկացուի։

—

ՄԱՔՍԱՑԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Օսմանեան և ռուսական պատուիրակաց միջև համաձայնութիւն գոյացեր է ալիւրի և քարիւղի մաքսային սակագնոց մասին, որք մինչեւ ցարդ առկախ կը մնային։ Այդ համաձայնութեամբ որոշուած է որ ալիւրին ի Թուրքիա ներմուծման մաքսատուրքը պիտի ըլլայ տասն-մէկուկէս դրուշ, և քարիւղինը՝ տասներկու դրուշ։ Օսմ. կառավարութիւնն այս դներուն հաւաներ է այն պայմանաւ միայն որ ուրիշ կարգ մը ապրանաց ներմուծման տուրքերն ուելցուին, որոյ մասին բանակցութիւնք կը կատարուին։

—

ԱՊԱՀՈՎԱԳԴ. ԸՆԿԵՐԱՒԹԻՒՆ

Առեւտրական և հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը Առեւտրական Սենեկի ուշադրութեան յանձնարարած է՝ Թուրքիոյ մէջ հաստատեալ ապահովագրական ընկերութեանց վերաբերեալ օրէնքն ամբողջովին գործադրութեան դնելու խնդիրը։ Առեւտրական Սենեկն այս մասին տեղեկագիր մը պատրաստած է զոր նախարարութեան պիտի մատուցանէ։

—

Պ. ՎԻԺԻԷԻ ԾՐԱԳԻՐԸ

Պ. Վիժիէի ծանօթ ծրագիրը, որ բարձրագոյն իշխանութեան կողմէ քննութեան առնուած է, հետեւեալ գիծերուն պիտի բաժնուի։ Եւրոպական եղերք։ Պաղա-Էօքի (Արեւելեան երկաթուղեաց գծին վրայ Ուզուն Քէօբրիի ամենէն մօտաւոր կայարանը) եւ Կէլիպոլու (Տարտանելի նեղուցին բերանը։ Ասիական եղերք։ Լամբսաքին Պալըքէսիրի միացուցեալ յետոյ, գիծը պիտի բաժնուի երկու ճիւղերու, որոց մին պիտի յանգի ի Պանդրմա եւ միւսն ի Պրուսա։ Երրորդ գիծ մըն ալ պիտի շինուի մինչև ի Տիքիլի՝ ասիական ծովեզրին վրայ, Միտիլլիի դիմաց։

—

ՍԱՐԻՏԱԲԻ

Սարիտաբիի առեւանդման ու արձակման պարագայից վերաբերեալ քննութիւնն աւարտած է։ Օսմանեան իշխանութենէն եւ հելլէնական հիւպատոսարանին միջեւ գոյացեալ համաձայնութեամբ մը՝ յանցաւորաց դէմ զուտ ոստիկանական միջոցներ ձեռք պիտի առնուին եւ ո՛չ թէ դատական։ Այս միջոցներ ի դործ դրուիլ սկսած են արդէն։

Առ այժմ ամբաստանեալներէն երկու հոգի բանտը կը դտնուին, հելլենական հպատակ մը եւ իտալական հպատակ մը, որոց մասին տնօրինութիւն մը եղած չէ տակաւին։

—

ՀԱՆԲԱՑ ՇՈՒՀԱԳՈՐԾՈՒՄ

Ալթոն Տիւրրի ընկերութեան և Իզմիրի «Բաթերսըն, Մաք Անտրէա և Ֆօրպ» ընկերութեան միջեւ վէճ ծագած ըլլալով, Այտընի նահանգին մէջ գտնուած քրօմի հանքաց շահագործման համար, որուն արտօնութիւնը երկու ընկերութեանց իւրաքանչիւրն իրեն կը վերագրէ, խնդիրը Պետական Խորհրդոյ քննութեան յանձնուած է։

—

ՊԱՃԱՐԱԽՏ Ի ԿԱՐՍ

Կարսի վաճառականք՝ Արտաքին գործոց նախարարութեան միջոցաւ խնդրած են Բ. Դռնէն որ արշաւաց ի Թուրքիա ներմուծման դէմ դրուած արգելքը վերցուի, որովհետեւ Կարսի ու շրջակայից մէջ երեւան եկած պաճարախտն անհետացած է։

—

ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՔ

Պաշտօնական վիճակագրէ մը կ'երեւի թէ ներկայ տարւոյ մայիս ամսուն սկիզբը մայրաքաղաքիս զինուորական տասը հիւանդանոցներուն մէջ կը դտնուէին 1457 հիւանդներ։ Նոյն ամսուան միջոցին ընդունուած են 2615 հիւանդներ, որով ընդհանուր թիւն եղած է 4072։ Ասոնցմէ 162ը մեռած են, 2199ը բժշկուելով դուրս եկած են, և 1711 հոգին մնացեր են դարմանուելու համար։

—

ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆ

Գոնեակի գաւառական լրագրոյն մէջ կը կարդանք թէ անցեալները տասն երեք հոգիէ բաղկացեալ աւազակ խումբ մը Պորտուր գաւառի Ազիզիէ գիւղացի Սաբը աշիրէթի պատկանող Ալի էֆէնտիի վրանը պաշարեր է։ Այս միջոցին կռիւ մը ծագելով երկու կողմէն զէնքեր պարպուեր և աւազակաց մին սպաննուելով հինգը վիրաւորուեր և եօթը խոյս տուեր են։ Վիրաւորեալք ձերբակալուելով, յետ քննութեան հաստատուած է թէ այս մարդիկ Կարսի, Բաղէշի ու Մշոյ կողմերէն են և թէ ասոնցմէ քիւրտ Իսմայիլ հեղինակն է Թիրէյի Ալի փաշայի սպաննութեան։ Ամեն կողմ հրամաններ ղրկուեր է փախստականները ձերբակալելու համար։

—

ՀՐԴԵՀ Ի ԳԱԼԱՏԱՆ

Գոնեակի լրագրոյն մէջ կը կարդանք թէ Գարաման գաւառակին մէջ յուլիս 17ին հրդեհ ծագելով 376 չէնքեր հրոյ ճարակ եղեր են։ Այս թուոյն մէջ կան երկու մզկիթ, վեց քարուկիր մթերանոց, 26 արմտեաց ամբարանոց, 240 խանութ, երկու փուռ, իւղի գործարան մը, աղբիւր մը, խանի ու սրբազարանի 61 սենեակներ եւ այլն։

Եղած վնասը 18-20,000 ոսկի կը հաշուուի բաց ի կալուածոց արժէքէն։

Աղեքսանդրիոյ իտալական դեր-հիւպատոս Պ. Ռօսի Իգմիր փոխադրուած է նոյն պաշտօնով։

—Առեւտր. Սենեկին կողմէ Ապահովական Սնտուկին վարչութեան մօտ պատուիրակ Զամարիա Հաճօրուլօ էֆէնտի հրաժարեր է այդ պաշտօնէն։ Այս հրաժարական կը վերագրուի յիշեալ վարչութեան և Սնտուկի տնօրէնութեան միջեւ ծագած անհամաձայնութեան մը։

—Վերջին մայիս ամսոյ մէջ 774 մահեր պատահած են ի Կ. Պոլիս։ Մեռնողներու 429ն իսլամ են, 313ը քրիստոնեայ և 32ը հրեայ։ Վերոյիշեալներէն 16ը ծաղկախտէ մեռած են։

—Մաքսային վերատեսչութեան թարգմանութեանց դիւանին տնօրէն անուանեցաւ Շէֆիգ պէյ, օգնական տնօրէն նոյն դիւանին։

Զմիւռնիոյ օտար ապրանաց մաքսատան տնօրէն անուանեցաւ Հասան էֆէնտի, Նախորդ տնօրէն Ներքին ապրանաց մաքսատան Զմիւռնիոյ։ Ասոր յաջորդեց Կէլիպոլուի մաքսատան տնօրէն Սաֆվէթ էֆէնտի։

Կէլիպոլուի մաքսատան տնօրէն անուանեցաւ Իլեաս էֆէնտի, տնօրէն Պարսի մաքսատան։

Իշխպոլուի մաքսատան տնօրէն անուանեցաւ Հաքգը պէյ, նախին տնօրէն մաքսատան Պանորմաի։

—Փրանսայի երեւելի բժիշկներէն Տոքթոր Բոնսթանթէն Բօլ մայրաքաղաքս կը դտնուի մէկ քանի օրէ ի վեր, և Պէյոլիքտէրէ կամպկիթայի Օթէլն իջեւանած է։

—Մեծաշարաւոտ յոյն վաճառական Պ. Վլասօբուլօ որ ժամանակէ մը հետէ Մեծկզզի կը բնակէր ընտանեօք, իւր անձնական Այ-ալթ Վլասոբուլօ շոգենաւով մեկնեցաւ ի Պրայլա։

—Թուրքիի այս աւուր թիւը գովեստիւք կը խօսի ի Գնալը-Լզզի երկրորդ սենեկապետ Հաճի Ալի պէյի գործակատար Յակոբեան Պաղտասար էֆէնտիի ամբանոցին ըստաւառութեան վրայ, որ, կըսէ, կիրակի գիշեր

եկնէ մայրաքաղաքս գալու համար, պիտի հանդիպի Օզաքա, Քուպա, Նակասաքի, Հոնկ-Քոնկ, Սինկափուռ, Քոլոմպօ, Ատէն, Ճիտտէ, Սուէզ և Բոռ-Սայիտ։ Մարտանաւն այս նաւահանգիստներու իւրաքանչիւրին մէջ չորս-հինգ օր պիտի մնայ, որով կը յուսացուի թէ դեկտեմբերի վերջերը և կամ յունուարի մէջ մայրաքաղաքս հասնի։

